

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. հունվարի 31-ից փետրվարի 6-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Հունվարի 31-ին, փետրվարի 4-5-ին առանձին շրջաններում դիտվել է ձյուն: Տեղումների գումարային քանակը Ջերմուկում կազմել է 26մմ, Արենիում՝ 16մմ, Անանուն լ-ցքում՝ 13մմ, Ֆանտանում՝ 10մմ, մնացած շրջաններում՝ 1-6մմ, մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունվարի 31-ին, փետրվարի 5-6-ին բարձր է եղել նորմայից 1-3, փետրվարի 1-4-ին՝ 3-7 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Տավուշում՝ +14...+18°C, Սյունիքում՝ հովիտներում՝ +14...+17°C, նախալեռներում՝ +9...+14°C, Լոռիում՝ +8...+13°C, Արարատյան դաշտում և Երևանում՝ +11...+12°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +12°C, լեռներում՝ +4°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +4...+11°C, լեռներում՝ 0...+2°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +8°C, լեռներում՝ +3...+5°C, Գեղարքունիքում՝ +2...+8°C (Սեմյոնովկայում՝ -1°C), Շիրակում՝ 0...+5°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Վայոց ձորում՝ լեռներում՝ -18°C, նախալեռներում՝ -6°C, Գեղարքունիքում՝ -12...-17°C, Շիրակում՝ -12...-16°C, Կոտայքում՝ լեռներում՝ -13...-15°C, նախալեռներում՝ -10°C, Արագածոտնում՝ լեռներում՝ -10...-13°C, նախալեռներում՝ -7...-8°C, Արարատյան դաշտում՝ -6...-8°C, Լոռիում՝ -4...-7°C, Տավուշում՝ -3...-4°C, Սյունիքի նախալեռներում՝ -6...-10°C, հովիտներում՝ -1...-6°C, Երևանում՝ -6...-7°C:

Փետրվարի 4-5-ին առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 100-500մ տեսանելիությամբ:

Շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է քամու մինչև 16-20մ/վրկ արագություն (հունվարի 31-ին Իջևանում՝ 25մ/վրկ):

Փետրվարի 7-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը կազմում է Ջերմուկում և Արագած բ/լ-ում՝ 75սմ, Ամբերդում՝ 55սմ, Հրազդանում՝ 50սմ, Ֆանտանում՝ 43սմ, Ամասիայում՝ 41սմ, Ապարանում և Սեմյոնովկայում՝ 38սմ, Աշոցքում՝ 25սմ, մնացած լեռնային շրջաններում՝ 6-23սմ: Արարատյան դաշտում, Տավուշում, Լոռիում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայում է:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով (30.01.22-06.02.2022թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.38մ (06.02.22թ.), ինչն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 15 սմ-ով: